

Անձնական օժանդակ տնտեսությունները խորհրդահայ գյուղում 1945-1965 թթ.

Կոխլիկյան Արամայիս

Հանգուցային բառեր. ԽՍՀՄ, ՀԽՍՀ, ԽՍԿԿ, բնակչություն, հանրապետություն, գյուղատնտեսություն, քաղաքականություն, բարեփոխում

Անձնական օժանդակ տնտեսությունը (ԱՕՏ) որպես ինքնուրույն տնտեսական կառույց, հանդես է եկել դեռևս կոլեկտիվացման ժամանակ: Նկատի ունենալով, որ գյուղում արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակի պայմաններում ստեղծվող հանրային տնտեսությունները չէին կարող լիովին բավարարել գյուղական բնակչության անձնական բոլոր պահանջունքները, պետությունը թույլ տվեց նրանց ունենալ ապրուստի լրացուցիչ աղբյուր՝ ԱՕՏ: Հայրենական մեծ պատերազմի տարիներին հանրապետության շատ կոլտնտեսականներ հանրային հողերի հաշվին ընդարձակեցին իրենց օժանդակ տնտեսությունները: Այն ոչ միայն գյուղացու ապրուստի հիմնական աղբյուրն էր, այլև քաղաքային բնակչությանը սննդամթերք մատակարարելու կարևոր միջոց, ուստի պետությունը ժամանակավորապես և միտումնավոր թույլատրեց այդ:

Հայաստանը բարեբախտաբար ռազմական գործողությունների թատերաբեմ չդարձավ, սակայն պատերազմն, անշուշտ, բացասաբար անդրադարձավ նաև մեր հանրապետության գյուղատնտեսության զարգացման վրա: Անդառնալի էր հատկապես աշխատանքային ներուժի կորուստը: Պատերազմի հետևանքով այն գյուղում նվազել էր 24.7 տոկոսով [15,172], կրճատվել էր հիմնականում 1910-1925թթ. ծնված տղամարդկանց թիվը: Հիմնական աշխատուժը կանայք, անչափահասներն ու ծերերն էին:

Հայրենական մեծ պատերազմից հետո մեծ և արդարացված էր բնակչության սպասումը: Հաղթանակի համար նա տվել էր իր ֆիզիկական ու հոգևոր ներուժը, խնայողությունները՝ ակնկալելով, որ պատերազմից հետո պետության և գյուղի միջև հարաբերությունները կբարելավվեն, լայնորեն կիրառվող վարչարարությունը կմեղմացվի, կլուծարվեն կամ գոնե կվերակառուցվեն կոլեկտիվ տնտեսությունները:

1945 թ. օգոստոսին ԽՍՀՄ Պետպլանը ԽՍՀՄ ժողկոմխորհի և միութենական հանրապետությունների կառավարությունների հետ համատեղ սկսեց չորրորդ 5-ամյա պլանի նախապատրաստումը: Դրա քննարկման ժամանակ առաջարկություններ եղան տնտեսության բնագավառում մեղմել վարչարարությունը և վերակառուցել կոլեկտիվ տնտեսությունները: Օրինակ՝ ՀամԿ(բ)Կ ԿԿ քարտուղար, Քաղբյուրոյի անդամ Ա. Անդրեևը հանդես էր գալիս օղակների՝ որպես կոլեկտիվ տնտեսվարման պարզեցված համակարգի լայն տարածման առաջարկությամբ: Նույն տեսակետն էր պաշտպանում նաև ԽՍՀՄ Պետպլանի նախագահ Ն. Վոզնիսենսկին: Նա նույնիսկ առաջարկում էր ընդլայնել գյուղացիների անձնական օժանդակ տնտեսությունները (ԱՕՏ) և այդ տնտեսություններից ստացված գյուղատնտեսական մթերքների իրացման համար ստեղծել պետական մանրածախ առևտրի ցանց [23, 283-284]: Այդ միջոցառումների կենսագործումը կնշանակեր

Ստալինի և կուսակցական շատ այլ գործիչների համար այնքան անցանկալի ՆԵՊ-ի որոշ տարրերի վերականգնում իր բոլոր հետևանքներով: Պատերազմում վիթխարի գոհողությունների գնով ձեռք բերված հաղթանակը իշխանական վերնախավում այն պատրանքն էր ստեղծել, թե գոյություն ունեցող համակարգն ամենակենսունակն է: Ուստի 1946 թ. փետրվարի 9-ին Ստալինն ՀամԿ(Բ)Կ ԿԿ պլենումում իր ելույթում նշեց, որ պահպանվելու են տնտեսվարման նախապատերազմյան եղանակները [26, 193]: Գյուղատնտեսության մասնավորեցման ուղղությամբ քայլերը կասեցվեցին և պետությունը, պահպանելով պատերազմական ժամանակի օրենքները, ծանրության կենտրոնը կրկին տեղափոխեց գյուղատնտեսության կենտրոնացված պլանավորման ու ստիպողական մթերումների կողմը:

Ստեղծված իրավիճակում գյուղի և գյուղատնտեսության հետպատերազմյան վերականգնման գործընթացի հիմնական ուղղությունները սահմանվեցին ԽՍՀՄ Նախարարների խորհրդի և ՀամԿ(Բ)Կ ԿԿ 1946թ. սեպտեմբերի 19-ի «Կոլտնտեսություններում գյուղատնտեսական արտելի կանոնադրության խախտումները վերացնելու միջոցառումների մասին» որոշմամբ: Խնդիր դրվեց ուժեղացնել պայքարը կոլտնտեսային սեփականության զանգվածային հափշտակությունների դեմ, նախանշվեցին կոլտնտեսությունների կազմակերպչա-տնտեսական միջոցառումներ: Ստեղծվեց Կոլտնտեսությունների գործերի խորհուրդ՝ Ա. Անդրեևի գլխավորությամբ, որը հանրապետություններում ուներ տեղական իշխանություններից անկախ գործող իր ներկայացուցիչները: Այն խիստ վերահսկողություն սահմանեց գյուղատնտեսական արտելի կանոնադրության կիրառման գործում [29, 253]:

Հանրային աշխատանքից խուսափող կոլտնտեսականների գերակշիռ մասը գյուղում իր աշխատանքային ներուժն օգտագործում էր ԱՕՏ-ներում: Դա պայմանավորված էր հանրային տնտեսության համեմատ աշխատանքային ծախսումների դիմաց ստացված ավելի բարձր ու կայուն եկամուտներով:

Իշխանությունները գյուղացիների աշխատանքային կարգապահությունը բարձրացնելու նպատակով սկզբում փորձեցին մեղմել վարչարարությունը: Դեռևս ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(Բ)Կ ԿԿ 1942 թ. ապրիլի 13-ի համատեղ որոշմամբ 1.5 անգամ բարձրացվել էր կոլտնտեսականների աշխօրի պարտադիր նվազագույնը, աշխատանքային նորմաներ էին սահմանվել անգամ 12-16 տարեկանների և ծերերի համար: Այն չբավարարողները ենթարկվում էին դատական պատասխանատվության կամ վտարվում կոլտնտեսություններից [30, 83]: ՀամԿ(Բ)Կ ԿԿ 1947 թ. փետրվարյան պլենումից հետո էական փոփոխություն մտցվեց ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(Բ)Կ ԿԿ 1942 թ. ապրիլի 13-ի որոշման մեջ: Մասնավորապես՝ աշխօրի պարտադիր նվազագույնը պահպանվեց միայն աշխատունակ կոլտնտեսությունների նկատմամբ [29, 118]: Սակայն կոլտնտեսականների աշխատանքային ակտիվության բարձրացման վրա այդ միջոցառումներն էական ազդեցություն չունեցան: 1947 թ. ՀԽՍՀ գյուղատնտեսության նախարարության կողմից անցկացված ստուգումները բացահայտեցին, որ աշխատունակ կոլտնտեսականների 30.4 տոկոսը չէր կատարել աշխօրերի նվազագույն պահանջը [2]: ԽՍՀՄ-ում այն կազմում էր 15 տոկոս, այդ թվում՝ Ուկրաինայում՝ 19, Բելոռուսիայում՝ 21 տոկոս [29, 119]:

Կոլտնտեսականների աշխատանքային կարգապահությանը չնպաստեց նաև ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1948թ. հունիսի 2-ի հրամանագրի կիրառումը, համաձայն որի՝ «գյուղատնտեսական արտադրությունից չարամտորեն խուսափելու և հակահասարակական ու պորտաբույծ կյանք վարելու» մեղադրանով Խորհրդային Հայաստանից միության հեռավոր շրջանները 8 տարվա քարտի դատապարտվեցին 257 կոլտնտեսային գյուղացիներ [22, 188]: Անգամ 1949 թ. աշխօրի նվազագույն պահանջը չբավարարողները կազմում էին հանրապետության ամբողջ աշխատունակ կոլտնտեսությունների 21.8 տոկոսը, ընդ որում նրանցից 2.4 տոկոսը ընդհանրապես չէր մասնակցել հանրային որևէ աշխատանքի: 1952 թ. այն համապատասխանաբար կազմում էր 19.3 և 4.2, իսկ 1953թ.՝ 21.5 և 6 տոկոս [9]:

1946թ. Հաս(Կ)Բ ԿԿ սեպտեմբերի 19-ի որոշումից հետո էլ մինչև 1946թ. նոյեմբերի 20-ը կրճատվեց 4378 ավելորդ հաստիք և կոլտնտեսությունների հետ առնչություն չունեցող, բայց աշխօրով վարձատրվող 350 հաստիք, որի շնորհիվ տնտեսվեց 923215 աշխօր: Կոլտնտեսություններին վերադարձվեց գյուղացիների կողմից ապօրինաբար օգտագործվող 6245 հա վարելահող, 2 մլն 699 հազ. ռուբլի արժողությամբ անասուններ, գյուղատնտեսական մթերքներ և այլն: Վերահաշվարկվեց կոլտնտեսությունների կողմից ձրի կամ էժան գներով բաց թողնված մթերքների արժեքը և ավելի քան 1 մլն ռուբլի վերադարձվեց նրանց:

Այդուհանդերձ կոլտնտեսությունների կողմից, ի հաշիվ հանրայինի, օժանդակ տնտեսության ընդլայնման ձգտումը չկանխվեց: 1948 թ. բացահայտվեց նմանատիպ 1123 [4], իսկ 1949թ.՝ 2200 դեպք, կոլտնտեսություններին վերադարձվեց 964.3 հա հողատարածք [5]:

Միաժամանակ ԱՕՏ-ների նկատմամբ պետությունը կիրառում էր ծանր հարկային քաղաքականություն: Այն իրականացվում էր բնամթերային (պետական պարտադիր մթերումներ) և դրամական (գյուղատնտեսական հարկ) հարկումների տեսքով: Հետպատերազմյան տարիներին Հայաստանում օժանդակ տնտեսությունների կողմից յուրաքանչյուր հեկտարի դիմաց մթերվում էր 15g հացահատիկ, 100 g կարտոֆիլ, 150g բանջարեղեն, 200g միրգ, յուրաքանչյուր կովի դիմաց՝ 900լ կաթ, 40 կգ միս, ոչխարի և այծի դիմաց՝ 60լ կաթ, 75 ձու և այլն [1]: Մթերումից գոյացած պարտքերը վճարելու համար լայնորեն կիրառվում էին տուգանքներ կամ հօգուտ պետության բռնագրավում էին կոլտնտեսականների ունեցվածքը [30, 83]:

1948-1949 թթ. հանրային անասնապահության եռամյա պլանը կատարելու համար օժանդակ տնտեսությունների կողմից անասնապահական մթերքների պարտադիր մթերումների ծավալները շուրջ 50 տոկոսով բարձրացվեցին: Դա հանգեցրեց նրան, որ կոլտնտեսականների զգալի մասը ստիպված հրաժարվեց անասնապահությունից: Այսպես, եթե 1941թ. ՀԽՍՀ ԱՕՏ-ներում հաշվվում էր 306.1 հազ. գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից 163.7 հազարը՝ կով, ապա 1952թ. այն, համապատասխանաբար, կազմեց 121.9 և 63.8 հազար գլուխ: Շուրջ 3 անգամ նվազեց նաև գյուղացիների մանր եղջերավոր անասունների զխաքանակը՝ 562.1 հազար գլխից իջնելով մինչև 201.5 հազար գլխի [28, 350]: Արդեն 1952թ. ՀԽՍՀ գյուղական բնակչության 68 տոկոսը, իսկ առանձին շրջաններում (Կամո,

Շամշադին, Սիսիան և այլն) մինչև 90 տոկոս անասնագուրկ էր [12, 97]:

Առավել ծանր էր պարբերաբար ավելացող գյուղատնտեսական հարկը: Եթե 1940 թ. յուրաքանչյուր օժանդակ տնտեսությունից գանձվում էր 112 ռուբլի, ապա 1951թ. այն բարձրացավ շուրջ 5 անգամ՝ կազմելով 523 ռուբլի [25, 258]: Պետության կողմից գյուղացիության նկատմամբ կիրառվող դաժան հարկային քաղաքականությունը հիմնավոր և արդարացված բնորոշվում է որպես «հարկային ահաբեկչություն», «հարկային շնչահեղձություն», «պետության կողմից գյուղի անխիղճ շահագործում» [22, 200]:

Գյուղի հանդեպ իրականացվող ստորացուցիչ պետական քաղաքականությունն ու իշխանությունների կոնկրետ միջոցառումներն անխուսափելիորեն հանգեցնում էին գյուղացիների հակազդեցությանը: Այն դրսևորվում էր իշխանություններին, հաճախ նաև կենտրոնական, հղված բողոք-դիմումներում, որոնցում ներկայացվում էր գյուղատնտեսության և գյուղի իրական պատկերը, առաջարկվում էր ընդլայնել օժանդակ տնտեսությունները, կիրառել աշխատանքի երաշխավորված վարձատրություն կամ կոլտնտեսությունները վերակազմել խորհրդային տնտեսությունների և այլն: Իշխանություններն այդ դիմումներին բավականաչափ ճկուն արձագանքեցին հատկապես 1950-ական թվականների կեսերին իրագործվող ագրարային վերափոխումների ժամանակ [29, 120]:

Ի. Ստալինի մահով ավարտվեց խորհրդային ամբողջատիրության կայացման ու ամրապնդման ժամանակաշրջանը: Այն հատկապես հետպատերազմյան տարիներին հասել էր այնպիսի մակարդակի, որից այն կողմ, միաժամանակ հասարակության հետ չխզելով սոցիալական բոլոր կապերը, այլևս չէր կարող գոյատևել:

Նոր իշխանությունների բնականոն գործունեության համար անհրաժեշտ էր հրաժարվել նախկին վարչակարգի ինքնամեկուսացման ծայրահեղություններից: Ուստի խորհրդային ղեկավարությունն անմիջապես հանդես եկավ բյուրոկրատիայի դեմ վճռական պայքարի, մարդու իրավունքների պաշտպանության, բնակչության կյանքի մակարդակը բարելավելու անհրաժեշտության մասին կոչերով: Որոշ ժամանակ անց ձեռնարկվեցին դրան միտված համապատասխան միջոցառումներ:

Գյուղատնտեսության բնագավառի բացասական երևույթներն անմիջականորեն արտացոլվում էին սոցիալական ոլորտներում: Ուստի իշխանությունների առաջնահերթ խնդիրն էր դարձել գոնե որոշ չափով մեղմել գյուղական նորմայի վերածված գյուղական բնակչության ծայրահեղ աղքատությունը:

Գյուղատնտեսությունը ծանր կացությունից դուրս բերել հնարավոր էր միայն այդ ոլորտում արմատական փոփոխությունների, իսկ գյուղական բնակչության կյանքի մակարդակը բարձրացնելը՝ նրա կենսական պահանջումների բավարարման շնորհիվ: Դրանք իրագործելու համար իշխանություններն ունեին սահմանափակ հնարավորություններ: Նախ՝ խորհրդային ղեկավարությունը պատրաստ չէր հրաժարվել գյուղատնտեսության վերաբերյալ ստալինյան գաղափարական ժառանգությունից: Սոցիալիստական գյուղատնտեսության գործող համակարգը խորհրդային իշխանությունը համարում էր միակ ճշմարիտը, որը կարիք ուներ որոշ ծայրահեղություններից ձեռքազատման: Ահա թե ինչու ԽՍՀՄ

ԿԿ 1953թ. հուլիսյան պլենումում ընդգծվեց, որ թեպետ գյուղատնտեսության բնագավառում բացթողումները քիչ չեն, բայց կոլտնտեսային կարգն ընդհանուր առմամբ առողջ էր [20, 50]: Երկրորդ գյուղատնտեսության առաջընթացն անհնար էր առանց բավականաչափ պետական հատկացումների: Մակայն քաղաքական և տնտեսական առումներով նպատակահարմար չէր փոխել ժողովրդական տնտեսության հինգերորդ 5-ամյակի դիրեկտիվները: Այն անխուսափելիորեն խառնաշփոթ կառաջացներ ողջ ժողովրդական տնտեսության մեջ:

Երրորդ բնակչության շրջանում զանգվածային դժգոհություն չառաջացնելու համար իշխանություններն անմիջապես չէին կարող հրաժարվել ապրանքների մանրածախ գների իջեցման քաղաքականությունից: 1953թ. ապրիլի 1-ին հայտարարվեց գների նոր իջեցման մասին [25, 301]: Ի դեպ, գների յուրաքանչյուր իջեցում ուղեկցվում էր բանվոր-ծառայողների աշխատավարձի չափերի նվազեցմամբ, պետական փոխառությունների ավելացմամբ և գյուղատնտեսական մթերքների պարտադիր մթերումների ծավալների բարձացմամբ: Այս քաղաքականությունը հետագայում ևս շարունակելը հատկապես գյուղատնտեսության համար կարող էր անդառնալի հետևանքներ ունենալ:

Փաստորեն իշխանությունները կարող էին իրականացնել միայն բավականին սահմանափակ միջոցառումներ թեթևացնել հարկային բեռը, մեղմել պետության կողմից լայնորեն կիրառվող վարչարարությունը, մասնակի վերականգնել կոլտնտեսությունների ինքնագործունեությունը, ընդլայնել ԱՕՏ-ները և այլն:

Չեթթական գյուղատնտեսական պլենումի նախապատրաստման համար ԽՄԿԿ ԿԿ քարտուղար Ն. Խրոնշչևիկի նախագահությամբ կազմվեց գյուղատնտեսության խնդիրներն ուսումնասիրող հանձնաժողով: Նրա ներկայացրած հինգ որոշումների նախագծերը հավանության անժանացան ԽՄՀՄ կառավարության և ԽՄԿԿ ԿԿ օգոստոսի 4-ի համատեղ նիստում: Ընթացիկ քննարկումներ կազմակերպելու նպատակով որոշվեց այդ նախագծերն ուղարկել ԽՄԿԿ ԿԿ բոլոր անդամներին ու թեկնածուներին, իրավասու նախարարությունների ու գերատեսչությունների ղեկավարներին, կուսակցության միութենական հանրապետությունների և մարզկոմների քարտուղարներին ու մարզգործկոմների նախագահներին [20, 52]:

ԽՄՀՄ Գերագույն խորհրդի 1953թ. օգոստոսին ընդունած «Գյուղատնտեսական հարկի մասին» նոր օրենքով էլ արմատապես փոխվեց ԱՕՏ-ների հարկման համակարգը: Եթե նախկինում հաշվի էր առնվում այդ տնտեսություններում մշակվող յուրաքանչյուր մշակաբույսից ստացված եկամտի չափը, ապա 1953թ. հուլիսի 1-ից հարկման հիմքում դրվեց հեկտարային սկզբունքը: Այդ օրենքով գյուղացիներն ազատվեցին նաև նախորդ տարիներին կուտակված պարտքերից, իսկ անասնագուրկ տնտեսությունները պետության կողմից տրամադրվող վարկերի միջոցով անասուն ձեռք բերելու հնարավորություն ստացան [12, 98]:

Այս ձեռնարկումը թերևս առաջին քայլն էր որոշ չափով շտկելու գյուղատնտեսության մեջ ստալինյան քաղաքականության ուղղվածությունը: Թեև իշխանության պահպանողական թերը այն անմիջապես բնորոշեց որպես «մալենկովյան դեմագոգիա» [20, 59], այնուհանդերձ «սառույցը ձեղքվեց» և, ըստ էության, մեկնարկվեց ագրարային նոր քաղաքականությունը: Վերջինիս համար վճռորոշ և

շրջադարձային նշանակություն ունեցավ ԽՄԿԿ ԿԿ 1953թ. սեպտեմբերյան պլենումը:

Ագրարային նոր քաղաքականության առանցքային հարցերից մեկը ԱՕՏ-ների նկատմամբ պետության վերաբերմունքի վերանայումն էր: Միայն 1953 թ. մարտի վերջին՝ Ստալինի մահից հետո, ԽՍՀՄ ֆինանսների նախարարությունը համարձակվեց կառավարության նոր ղեկավար Գ. Մալենկովին ներկայացնել գեկույց պետության կողմից ԱՕՏ-ների նկատմամբ կիրառվող ծայրահեղ քայքայիչ հարկային քաղաքականության մասին: Զեկույցում նշվում էր, որ 1949-1952 թթ. այդ տնտեսություններից գանձվող հարկերը 8645 մլն. ռուբլուց աճել էին 9996 մլն. ռուբլու կամ յուրաքանչյուր տնտեսությունից՝ 419 ռուբլուց մինչև 528 ռուբլի [30, 80]:

Խորհրդային նոր ղեկավարությունը, հանրային տնտեսությունների նկատմամբ անձնական օժանդակ տնտեսությունների ստորակարգման հայացքներից հակառակ, սկզբում ստիպված էր հանդես գալ ԱՕՏ-ների ակտիվ պաշտպանի դերում: Այս քաղաքականության ոգեշնչողը Գ. Մալենկովն էր: Այն բացի սոցիալականից, ուներ նաև քաղաքական կարևորություն՝ գյուղական բնակչության շրջանում բարձրացնել նոր իշխանությունների հեղինակությունը:

ԱՕՏ-ների զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցավ Գյուղատնտեսական հարկի մասին օրենքը, որի կիրառման շնորհիվ 1953 թ. ՀԽՍՀ գյուղական բնակչությունը նախորդ տարվա համեմատությամբ 4137 հազ. ռուբլի քիչ հարկ վճարեց [6]:

ԱՕՏ-ների խնդիրը քննարկվեց նաև ԽՄԿԿ ԿԿ սեպտեմբերյան պլենումում: Այն անդրադարձավ այդ տնտեսություններից գանձվող մթերքների բարձր նորմաներին և հարկային քաղաքականության այլ սխալներին, որոնք հանգեցրել էին գյուղական բնակչության անձնական անասունների ոչնչով չհիմնավորված կրճատմանը [5]: Պլենումի պահանջով ԽՍՀՄ Նախարարների խորհրդի և Մթերումների նախարարության 1953 թ. դեկտեմբերի 16-ի համատեղ որոշմամբ շուրջ 30-տոկոսով կրճատվեցին ԱՕՏ-ների կողմից անասնապահական մթերքների պարտադիր մթերումների ծավալները: ԽՍՀՄ կառավարության 1954 թ. հունվարի 6-ի որոշմամբ պատերազմի մասնակիցներն ու հաշմանդամներն ամբողջովին, իսկ գյուղատնտեսության մասնագետները, բժիշկներն ու մանկավարժները մասնակի ազատվեցին անասնապահական մթերքների պարտադիր մթերումներից: Միաժամանակ գյուղացիներն ազատվեցին նաև միայնակ ու սակավանդամ ընտանիքներից գանձվող հարկից: Այդ միջոցառումների շնորհիվ 1952 թ. համեմատությամբ 1954 թ. ՀԽՍՀ գյուղական բնակչությունից գանձվող հարկերը նվազեցին շուրջ 2.5 անգամ [25, 305]:

Սեպտեմբերյան պլենումից հետո ագրարային նոր քաղաքականությունը ի սկզբանե իրենից ներկայացնում էր գյուղատնտեսության զարգացման երկու հիմնական մոտեցումների փոխզիջումային տարբերակ: Թույլատրվում էր սահմանափակ մասնավոր գյուղացիական տնտեսությունների գործունեություն, որը պայմանականորեն կարելի է նմանեցնել ՆԷՊ-ին: Սակայն իշխանություններն այդ դիտում էին որպես իրադրությունից բխող զիջողականություն, յուրահատուկ ժամանակավոր նահանջ: Ահա թե ինչու ԽՄԿԿ ԿԿ 1955 թ. հունվարյան պլենումում Գ,

Մալենկովը մեղադրվեց ԱՕՏ-ներին անհարկի զիջումների մեջ և զրկվեց ԽՍՀՄ կառավարության նախագահի պաշտոնից: Խորհրդային ղեկավարությունը վերսկսեց ԱՕՏ-ների սահմանափակման քաղաքականությունը: ԽՄԿԿ ԿԿ և ԽՍՀՄ նախարարների խորհրդի 1956 թ. մարտի 6-ի համատեղ որոշմամբ կոլտնտեսականների ընդհանրուր ժողովին իրավունք վերապահվեց, հաշվի առնելով կոլտնտեսականների ընտանիքների աշխատունակ անդամների մասնակցությունը հանրային աշխատանքներին, սահմանել տնամերձ հողամասերի և օժանդակ տնտեսություններում անասուններ ունենալու չափերը: Փաստորեն ի հաշիվ հասարակական հողերի արգելվեց ԱՕՏ-ների ընդլայնումը և նույնիսկ պահանջվեց կրճատել դրանք [26, 405]:

Ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ ՀԽՍՀ-ում տեղական կուսակցական ու խորհրդային մարմինները, հաճախ անտեսելով կոլտնտեսականների ընդհանուր ժողովների որոշումները, մեխանիկորեն կրճատեցին անգամ կոլտնտեսություններում ազնվորեն աշխատող կոլտնտեսականների տնամերձերը և անասունների գլխաքանակը [19, 123], որը համընդհանուր դժգոհություն առաջացրեց կոլտնտեսային գյուղացիության շրջանում: Իշխանության վերադաս մարմիններին հղվեցին հազարավոր դիմում բողոքներ [27, 186]:

Գյուղում ձևավորված «անառողջ մթնոլորտը» չէր կարող չանհանգստացնել Խորհրդային ղեկավարությանը: Կրկին վերանայվեց ԱՕՏ-ների նկատմամբ կիրառվող քաղաքականությունը: ԽՄԿԿ ԿԿ և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1957 թ. հուլիսի 4-ի համատեղ որոշմամբ կոլտնտեսականների և բանվորածառայողների ԱՕՏ-ներից պետության բոլոր տեսակի գյուղատնտեսական մթերքների պարտադիր հանձնումները 1958 թ. հուլիսի 1-ից վերացվեցին: Այս քայլը հիմնավորվում էր նրանով, որ մթերումների ընդհանուր ծավալում անհատական տնտեսությունների տեսակարար կշիռն աննշան էր: Հանրային տնտեսություններն արդեն ապահովում էին մսի, կաթի և բրդի մթերումների 81-89 տոկոսը [30, 8]:

Այդուհանդերձ հանրապետության առանձին շրջաններում իշխանության տեղական մարմինները կոլտնտեսականների համար շարունակում էին սահմանել պետությանը գյուղատնտեսական մթերքներ վաճառելու առաջադրանքներ: Այն չկատարելու դեպքում սահմանափակվում էին ԱՕՏ-ների նկատմամբ կոլտնտեսականների իրավունքները: Շուկայական գները շուրջ 60 տոկոսով բարձր էին պետական գնման գներից, ուստի կոլտնտեսականները շահագրգռված էին իրենց ապրանքը վաճառել շուկայում [18]: Այդ իրավունքը չպետք է սահմանափակվեր [15, 248]:

ԱՕՏ-ները կարևոր դեր էին խաղում նաև ՀԽՍՀ պարենի ընդհանուր պաշարի ավելացման գործում: Այդ տնտեսություններն ապահովում էին գյուղատնտեսական մթերքների համախառն արտադրանքի 34 տոկոսը, այդ թվում՝ կարտոֆիլի 51, բանջարեղենի՝ 48, պտուղների՝ 59, խաղողի՝ 52, մսի՝ 47, կաթի 44.5, ձվի 87.6 տոկոսը [28, 409-410]: Այդ մթերքների զգալի մասը սպառվում էր արտադրողների կողմից, իսկ որոշ մասը իրացվում էր կոլտնտեսային շուկայում: Այս ճանապարհով գյուղական ընտանիքներն ապահովում էին իրենց դրամական եկամուտների զգալի մասը:

1962-1964 թթ. անհիմն կերպով կրկին սահմանափակվեցին կոլտնտեսա-

կանների ԱՕՏ-ները, իսկ խորհունտեսությունների բանվոր ծառայողները գրեթե ամբողջովին զրկվեցին դրանցից: Այդ միջոցառումների հետևանքով կրճատվեց գյուղացիների կողմից վաճառքի հանվող գյուղատնտեսական մթերքների ծավալը: Դա հատկապես ակնառու էր ՀԽՍՀ կոլտնտեսային շուկայում շրջանառության ֆիզիկական ծավալի 24 տոկոս կրճատումից, իսկ 1958 թ. համեմատությամբ 1964 թ. գյուղատնտեսական մթերքների գները բարձացան 27 տոկոսով: Դա բացասաբար անդրադարձավ նաև քաղաքային բնակչության կենսամակարդակի վրա: Բավական է նշել, որ կոլտնտեսային շուկային բաժին էր ընկնում պարեն գնելու համար քաղաքային բնակչության ծախսերի ավելի քան 20 տոկոսը:

ԽՄԿԿ ԿԿ 1964 թ. հոկտեմբերի 27-ի որոշմամբ ԱՕՏ-ների նկատմամբ չհիմնավորված սահմանափակումները վերացվեցին, իսկ Պետբանկին իրավունք տրվեց անասուն ձեռք բերելու համար վարկավորել գյուղացիներին [17, 31]:

Գյուղական ընտանիքների եկամուտների ստացման աղբյուրներում զգալի էր ԱՕՏ-ի դերը: ՀԽՍՀ գյուղական յուրաքանչյուր ընտանիքի ստացած համախառն եկամտի մեջ օժանդակ տնտեսության բաժինը 1953 թ. կազմում էր 36.5, իսկ 1965 թ.՝ 33.6 տոկոս, ընդ որում՝ լեռնային և բարձր լեռնային բնակավայրերում՝ ավելի բարձր՝ շուրջ 60 տոկոս: Եթե մինչև 1950-ական թվականների վերջը այն գյուղական ընտանիքների պարենի անձնական պահանջունքների բավարարման հիմնական աղբյուրներից մեկն էր, ապա հետագա տարիներին սկսեց նաև զգալի դեր խաղալ կուտակման գործառնություն: Այն արտահայտում էր խնադրամարկդներում գյուղական բնակչության ներդրած ավանդների աճով: Օրինակ՝ եթե 1940 թվականի համեմատությամբ 1950 թ. գյուղական վայրերում ավանդատուների թիվը 34000-ից նվազել էր մինչև 19000-ի, ապա 1959 թ. բարձրացավ մինչև 65000, իսկ 1965 թ.՝ 71000: Ընդ որում՝ եթե յուրաքանչյուր ավանդի միջին չափը 1940 թվականին կազմում էր 24, 1959 թ.՝ 150,1, ապա 1965 թ.՝ 334 ռուբլի: Սակայն բնակչության ավանդների ծավալի աճը արդյունք էր ոչ այնքան գյուղական բնակչի նյութական պայմանների բարելավման, որքան օժանդակ տնտեսությունից ստացված եկամուտի միանվագ տնտեսման և ընդհանրապես գյուղաբնակի հոգեբանության մեջ կուտակման հակումի ուժեղ դրսևորման:

Այսպիսով, ակնհայտ է որ գյուղատնտեսության զարգացման մակարդակը չէր բավարարում բնակչության հարաճուն պահանջները: 1965 թ. դրությամբ յուրաքանչյուր բնակչին ընկնող գյուղատնտեսական մթերքների արտադրանքով Խորհրդային Հայաստանը Միության հանրապետությունների մեջ գրավում էր վերջին տեղը՝ համախառն արտադրանքով կրկնակի զիջելով ԽՍՀՄ միջինին: Այս ամենը լրջորեն վտանգում էր հասարակության տնտեսական ու սոցիալական զարգացումը:

Այդուհանդերձ ԱՕՏ-ն էր գյուղացու անձնական պահանջունքների բավարարման հիմնական աղբյուրը: Վերջինիս գոյությամբ գյուղացիությունը, թեկուզ և սահմանափակ, բայց հնարավորություն էր ստանում ցուցաբերել տնտեսական ինքնուրունություն: Բացի տնտեսականից՝ այն ուներ նաև սոցիալ-հոգեբանական կարևորություն: Միայն այս ճանապարհով էր գյուղացին կարողանում ինքնադրսևորվել, ձեռք բերել «լավ» տնտեսատիրոջ հեղինակություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱԱ, ֆ.1, ց. 26, գ. 39, թ. 54:
2. ՀԱԱ, ֆ.1, ց. 27, գ. 47, թ. 7:
3. ՀԱԱ, ֆ.1, ց. 27, գ. 47, թ. 9:
4. ՀԱԱ, ֆ.1, ց. 30, գ. 225, թ. 40:
5. ՀԱԱ, ֆ.1, ց. 30, գ. 225, թ. 184:
6. ՀԱԱ, ֆ.1, ց. 33, գ. 72, թ. 1:
7. ՀԱԱ, ֆ.1, ց. 33, գ. 72, թ. 41:
8. ՀԱԱ, ֆ.1, ց. 28, գ. 217, թ. 67:
9. ՀԱԱ, ֆ.1, ց. 33, գ. 72, թ. 19:
10. ՀԱԱ, ֆ.1, ց. 43, գ. 78, թ. 16-17:
11. ՀԱԱ, ֆ.1, ց. 44, գ. 69, թ. 2-3:
12. Գեղամյան Գ., Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը սոցիալիզմի վերջնական հաղթանակի ժամանակաշրջանում, (1946-1958թթ.), Երևան, 1968:
13. Խոջաբեկյան Վ., Հայկական ՍՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության արդի պրոբլեմները, Երևան, 1976:
14. Հակոբյան Վ., Սոցիալական փոփոխությունները Հայկական ՍՍՀ գյուղում զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում, Երևան, 1985:
15. Հայաստանի գյուղատնտեսությունը 40 տարում, կազմող Տեր-Մարտիրոսյան Ս., Երևան, 1961:
16. Հայաստանի գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման հարցերը, Պատասխանատու խմբագիր Այրումյան Ա., Երևան, 1966:
17. Հայաստանի կոմունիստական պարտիայի 19 համագումարի բանաձև Հայաստանի կոմպարտիայի Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցման առթիվ, Երևան, 1958թ.:
18. Սովետական Հայաստան, 6 հուլիսի, 1965:
19. Օհանջանյան Բ., Հայաստանի բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի պատմությունից (1953-1965թթ.), Երևան, 1970:
20. Аксютин Ю., Хрущевская «Оттепель» и общественные настроения в СССР 1953-1964 гг. », Москва, 2004.
21. Замсков В., Спецпоселенцы в СССР, 1930-1960, Москва, 2005.
22. Зима В., Голод в СССР 1946-1947 гг.: происхождение и последствия, Москва, 1996.
23. Хоскинг Дж., История Советского Союза, 1917-1991, Смоленск, 2000.
24. Народное хозяйство Армянской ССР к 60-летию Великого Октября, (статистический сборник), Ереван, 1977.
25. Новейшая история Отечества, 20 век: Учебник для вузов, (Редакторы Киселев А., Шагин Э.), Москва, 1999.
26. Кожинов В., Россия Век 20 (1939-1964). Опыт беспристрастного исследования, Москва, 2002.
27. Пихоя Р., Советский Союз: история власти 1945-1991, Москва, 1998.
28. Сельское хозяйство Армянской ССР, статистический сборник, Ереван, 1969.
29. Отечественная история, Москва, 1993, N3.
30. Отечественная история, Москва, 2000, N6.

Личные подсобные хозяйства в армянской советской деревне 1945–1965 гг.

Кохликян Арамаис

Резюме

Ключевые слова: СССР, АССР, КПСС, население, республика, сельское хозяйство, политика, реформа

В статье выявляются и исследуются роль и значение личных подсобных хозяйств в жизни сельского населения Советской Армении. Представлены причины выделения ЛПХ в самостоятельную экономическую структуру. Отмечается, что оно было не только основным источником средств существования для крестьян, но и важным средством снабжения продовольственными продуктами для городского населения. Это и стало причиной того, что в годы коллективизации государство временно и тенденциозно разрешило существование ЛПХ. Выявляется и анализируется также периодически меняющееся отношение государства к ЛПХ в контексте аграрной политики КПСС, исследуются его основные субъективные и объективные причины. В частности, освещаются карательные и ограничительные шаги правительства в первые послевоенные годы, а также отношение и противодействие населения, связанные с ограничением ЛПХ. Освещаются некоторые привилегии, иногда субъективного характера, предоставленные ЛПХ правительством СССР в ходе аграрных реформ. Исследуются, в частности, действия наших властей в вопросе повышения трудовой дисциплины в общественных хозяйствах за счет крестьян, вовлеченных в ЛПХ. Анализируются причины неэффективности этих действий. Подчеркивается, что частичные уступки ЛПХ в ходе аграрных реформ власти осуществляли, исходя из политической целесообразности. Освещается роль ЛПХ в источниках получения прибыли сельскими семьями, а также с точки зрения накопительных вкладов крестьян.

Private Auxiliary Properties in Soviet-Armenian Village in 1945-1965

Kokhlikyan Aramays

Summary

Key words: *The USSR (The Union of Soviet Socialist Republics), The ASSR (the Armenian Soviet Socialist Republic), The CPRS (The Communist Party of the Soviet Union), population, republic, agriculture, politics, reform*

The role and importance of private auxiliary properties, in the life of the Soviet Armenian rural population, is revealed and analyzed in the article. There are presented the reasons for the allocation of PUEs in an independent economic structure. It is mentioned, that it was not only the main source of subsistence for the rural population, but also it was an essential means of supplying food to the urban population. That was the reason of the state's temporarily and deliberately allowance of the PUEs' existence, during the collectivization years/period. The state's periodically changing attitude towards the PUEs, in the context of the Soviet Union Communist Party's agricultural policy, is revealed and analyzed. Particularly, the punitive and limiting actions, carried out by the authorities, during the first post-war years, were elucidated, as well as the attitude and the contradiction of the population towards the limitation of the PUEs.

During the agricultural reforms, some privileges, given to the PUEs, were elucidated, and also in some cases the subjunctive approaches of the ASSR (Armenian Soviet Socialist Republic).

Particularly, the steps of our authorities have been discussed at the expense of raising the working discipline of public sector respondents from the PUEs. The reasons for these inefficiencies were analyzed. It was underlined, that the authorities based on political expediency were implementing partial compromises of PUEs.

The role of the PUEs was elucidated in the sources of getting income from rural families, as well as in the function of accumulation of villagers' deposits.